ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/6

ք. Երևան «29» 01 2021թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գաուդեամուս» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Կարինե Գեվորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական տարաբնույթ միջոցառումների և պատվիրակության անդամների համար «Թարգմանչական ծառայություններ» (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Գաուդեամուս» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 42
ՀՎՀՀ 00008519	Գործառնական տնօրեն՝ Կարինե Գևորգյան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 2470102730400000
Հ/Հ 900011020089	Արդշինինվեստբանկ ՓԲԸ
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝ Տիգրան Գալստյան	ՀՎՀՀ՝ 02576753
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«29» 01 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
Ամրագրված միջոցների դասակարգման համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավոր	ընդհանուր գինը/ՀՀ դրամ			Ծառայության մատուցման	մատուցման	
				Մեկ ժամ	Կես օր	Ամբողջ օր		ըստ	ժամկետը
1	79111200/1 Բանավոր հաջորդական թարգմանություն	Ազգային ժողովի կարիքների համար թարգմանչական ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին, ժամերին եւ վայրերում: Ծառայությունը յուրաքանչյուր օրվա համար մինչև 3 ժամ տևող միջոցառման ժամանակ իրականացվելու է մեկ թարգմանչի կողմից: Կախված միջոցառման տեւողությունի՝ երկու ժամից ավելի Կատարողի կողմից ներգրավվում է 2 թարգմանիչ, եւ համապատասխանաբար վճարը հաշվարկվում է երկու թարգմանչի համար սկսած՝ առաջին ժամից: Թարգմանչի տվյալները նախապես ներկայացվում են պատվիրատուին եւ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաստատվում են պատվիրատուի կողմից: Պատվիրատուի կողմից ծառայություն մատուցելու պատվերն Կատարողին է ուղարկվում դրա սկսելու օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Մինչեւ 3 ժամ տեւողությամբ թարգմանության դիմաց վարձատրությունը հաշվարկվում է ըստ ժամերի: 3-5 ժամի դեպքում, գործում է կես օրվա համար նախատեսված սակագինը, իսկ 5-8 ժամի դեպքում՝ կգործի լրիվ օրվա համար նախատեսված սակագինը: Պատվիրատուն կարող է չեղարկել դրա սկսելուց առավելագույնը 3 ժամ առաջ: Եթե 3 ժամից ավելի քիչ ժամանակից հետո պատվերը չեղարկվում է, ապա Պատվիրատուն վճարում է ներկայացված նախնական պատվերի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ նախապես ժամաքանակի պատվերից միջոցառումը կամ թարգմանությունը տևում է ավելի պակաս ժամանակ, ապա Պատվիրատուն վճարում է նախապես պատվիրված ժամանակի համար: Եթե Միջոցառումը կամ թարգմանությունը տևում է նախապես Պատվիրատուի կողմից նշված ժամանակից ավել ժամանակ, ապա Պատվիրատուն վճարումը փաստացի թարգմանությունը կատարած ժամանակահատվածի համար: Այս դեպքում, թարգմանությունը տևումը 2 ժամից ավել ապա կիրառվում է 2 թարգմանչի համար վճարման կանոնը: Թարգմանությունը պետք է իրականացվի՝ հայերեն-անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն-հայերեն լեզուներով:	հատ	40000	100000	180000	1	Պատվիրատուի կողմից նշված վայրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021թ.

2	79111200/1 Բանավոր հաջորդական ժեստերի լեզվով թարգմանություն	Ազգային ժողովի կարիքների համար թարգմանչական ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին, ժամերին եւ վայրերում: Ծառայությունը յուրաքանչյուր օրվա համար մինչև 3 ժամ տևող միջոցառման ժամանակ իրականացվելու է մեկ թարգմանչի կողմից: Կախված միջոցառման տեւողությունի՝ երկու ժամից ավելի Կատարողի կողմից ներգրավվում է 2 թարգմանիչ, եւ համապատասխանաբար վճարը հաշվարկվում է երկու թարգմանչի համար սկսած՝ առաջին ժամից: Թարգմանչի տվյալները նախապես ներկայացվում են պատվիրատուին եւ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաստատվում են պատվիրատուի կողմից: Պատվիրատուի կողմից ծառայություն մատուցելու պատվերն Կատարողին է ուղարկվում դրա սկսելու օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Մինչեւ 3 ժամ տեւողությամբ թարգմանության դիմաց վարձատրությունը հաշվարկվում է ըստ ժամերի: 3-5 ժամի դեպքում, գործում է կես օրվա համար նախատեսված սակագինը, իսկ 5-8 ժամի դեպքում՝ կգործի լրիվ օրվա համար նախատեսված սակագինը: Պատվիրատուն կարող է չեղարկել դրա սկսելուց առավելագույնը 3 ժամ առաջ: Եթե 3 ժամից ավելի քիչ ժամանակից հետո պատվերը չեղարկվում է, ապա Պատվիրատուն վճարում է ներկայացված նախնական պատվերի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ նախապես ժամաքանակի պատվերից միջոցառումը կամ թարգմանությունը տևում է ավելի պակաս ժամանակ, ապա Պատվիրատուն վճարում է նախապես պատվիրված ժամանակի համար: Եթե Միջոցառումը կամ թարգմանությունը տևում է նախապես Պատվիրատուի կողմից նշված ժամանակից ավել ժամանակ, ապա Պատվիրատուն վճարումը փաստացի թարգմանությունը կատարած ժամանակահատվածի համար: Այս դեպքում, թարգմանությունը տևումը 2 ժամից ավել ապա կիրառվում է 2 թարգմանչի համար վճարման կանոնը: Թարգմանությունը պետք է իրականացվի՝ հայերեն-անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն-հայերեն լեզուներով:	հատ	25000	80000	120000	1	Պատվիրատուի կողմից նշված վայրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021թ.
3	79111200/1 Բանավոր համաժամանակյա թարգմանություն	Ազգային ժողովի կարիքների համար թարգմանչական ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին, ժամերին եւ վայրերում: Ծառայությունը յուրաքանչյուր օրվա համար մինչև 2 ժամ տևող միջոցառման ժամանակ իրականացվելու է մեկ թարգմանչի կողմից: Կախված միջոցառման տեւողությունի՝ երկու ժամից ավելի Կատարողի կողմից ներգրավվում է 2 թարգմանիչ, եւ համապատասխանաբար վճարը հաշվարկվում է երկու թարգմանչի համար սկսած՝ առաջին ժամից: Թարգմանչի տվյալները նախապես ներկայացվում են պատվիրատուին եւ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաստատվում են պատվիրատուի կողմից: Պատվիրատուի կողմից ծառայություն մատուցելու պատվերն Կատարողին է ուղարկվում դրա սկսելու օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Մինչեւ 3 ժամ տեւողությամբ թարգմանության դիմաց վարձատրությունը հաշվարկվում է ըստ ժամերի: 2-4 ժամի դեպքում, գործում է կես օրվա համար նախատեսված սակագինը, իսկ 4-8 ժամի դեպքում՝ կգործի լրիվ օրվա համար նախատեսված սակագինը: Պատվիրատուն կարող է չեղարկել դրա սկսելուց առավելագույնը 1 օր առաջ, այլապես Պատվիրատուն վճարում է ներկայացված նախնական պատվերի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ նախապես ժամաքանակի պատվերից միջոցառումը կամ թարգմանությունը տևում է ավելի պակաս ժամանակ, ապա Պատվիրատուն վճարում է նախապես պատվիրված ժամանակի համար: Եթե Միջոցառումը կամ թարգմանությունը տևում է նախապես Պատվիրատուի կողմից նշված ժամանակից ավել ժամանակ, ապա Պատվիրատուն վճարումը փաստացի թարգմանությունը կատարած ժամանակահատվածի համար: Այս դեպքում, թարգմանությունը տևումը 2 ժամից ավելի, ապա կիրառվում է 2 թարգմանչի համար վճարման կանոնը: Թարգմանությունը պետք է իրականացվի՝ հայերեն-անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն-հայերեն լեզուներով:	հատ	40000	100000	180000	1	Պատվիրատուի կողմից նշված վայրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021թ.

4	79111200/1 Բանավոր համաժամանակյա ժեստերի լեզվով թարգմանություն	Ազգային ժողովի կարիքների համար թարգմանչական ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին, ժամերին եւ վայրերում: Ծառայությունը յուրաքանչյուր օրվա համար մինչև 2 ժամ տևող միջոցառման ժամանակ իրականացվելու է մեկ թարգմանչի կողմից: Կախված միջոցառման տեւողությունի՝ երկու ժամից ավելի Կատարողի կողմից ներգրավվում է 2 թարգմանիչ, եւ համապատասխանաբար վճարը հաշվարկվում է երկու թարգմանչի համար սկսած՝ առաջին ժամից: Թարգմանչի տվյալները նախապես ներկայացվում են պատվիրատուին եւ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաստատվում են պատվիրատուի կողմից: Պատվիրատուի կողմից ծառայություն մատուցելու պատվերն Կատարողին է ուղարկվում դրա սկսելու օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Մինչեւ 3 ժամ տեւողությամբ թարգմանության դիմաց վարձատրությունը հաշվարկվում է ըստ ժամերի: 2-4 ժամի դեպքում, գործում է կես օրվա համար նախատեսված սակագինը, իսկ 4-8 ժամի դեպքում՝ կգործի լրիվ օրվա համար նախատեսված սակագինը: Պատվիրատուն կարող է չեղարկել դրա սկսելուց առավելագույնը 1 օր առաջ, այլապես Պատվիրատուն վճարում է ներկայացված նախնական պատվերի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ նախապես ժամաքանակի պատվերից միջոցառումը կամ թարգմանությունը տևում է ավելի պակաս ժամանակ, ապա Պատվիրատուն վճարում է նախապես պատվիրված ժամանակի համար: Եթե Միջոցառումը կամ թարգմանությունը տևում է նախապես Պատվիրատուի կողմից նշված ժամանակից ավել ժամանակ, ապա Պատվիրատուն վճարումը փաստացի թարգամանությունը կատարած ժամանակահատվածի համար: Այս դեպքում, թարգմանությունը տևումը 2 ժամից ավելի, ապա կիրառվում է 2 թարգմանչի համար վճարման կանոնը: Թարգմանությունը պետք է իրականացվի՝ հայերեն-անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն-հայերեն լեզուներով:	հատ	25000	80000	120000	1	Պատվիրատուի կողմից նշված վայրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021թ.
Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում Մասնակիցը պետք է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի գրավոր հաստատում ամրագրման մասին: Ընդ որում, հաստատումը կարող է ներկայացվել Պատվիրատուի հետևյալ էլ. փոստի հասցեին՝ gk@parliament.am;									

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գաուդեամուս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 42
Գործառնական տնօրեն՝ Կարինե Գևորգյան
h/h 24701027304000000
Արդշինինվեստբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02576753

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«29» 01 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	***Ընդամենը***
1-4	79111200/1	Ներկայացուցչական ծախս /հոդված - 4237/	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար - գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գաուդեամուս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 42
Գործառնական տնօրեն՝ Կարինե Գևորգյան
հ/հ 2470102730400000
Արդշինինվեստբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02576753

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«29» 01 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» 01 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն